ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք.Երևան «22» 03 2021թ.

Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ի դեմս ղեկավար Սուրեն Թովմասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ Համալսարան) ի դեմս տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մյուս կողմից (այսուհետ՝ նաև Կողմեր), կնքեցին սույն համագործակցության Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Սույն Հուշագրի նպատակն է՝ ապահովել Կոմիտեում Համալսարանի ուսանողների (այսուհետ՝ Պրակտիկանտներ) վերապատրաստումը, մասնագիտական որակավորման բարձրացումը:

1.2 Սույն Հուշագրի շրջանակներում իրականացվող համագործակցությունը հիմնված է Կողմերի բարի կամքի, փոխադարձ հարգանքի և վստահության վրա:

2. ՀՈՒՇԱԳՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Կողմերը սույն Հուշագրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացնելու են ստորև նշված միջոցառումները.

2.1 Կոմիտեն՝

2.1.1. Իրականացնում է Պրակտիկանտների վերապատրաստման, մասնագիտական որակավորման բարձրացման գործընթացը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների գրանցման, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, անշարժ գույքի գնահատման, անշարժ գույքի հաշվառման (չափագրման), հողաշինարարության, գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում:

2.1.2. Կազմակերպում է ուսումնական պլաններին համապատասխան գործնական պարապմունքներ Կոմիտեի աշխատակիցների (քաղաքացիական ծառայողների և այլ մասնագետների) և Համալսարանի մասնագիտական ամբիոնների դասախոսների հետ համատեղ Կոմիտեի վարչական շենքում (հասցեն՝ ՀՀ ք.Երևան, Արշակունյաց 7):

2.1.3. Իրականացնում է ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաներ, ինչպես Կոմիտեի վարչական շենքում, այնպես էլ սպասարկման գրասենյակներում ու տարածքային ստորաբաժանումներում (ըստ անհրաժեշտության):

2.1.4. Կազմակերպում է սեմինարներ, դասընթացներ և այլ քննարկումներ:

2.1.5. Ապահովում է Կոմիտեի աշխատակիցների մասնակցությունը Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների իրականացման գործընթացներին:

2.1.6. Պրակտիկայի ավարտից հետո հաստատում է յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքի հաշվետվության օրագիրը:

2.2. Համալսարանը՝

2.2.1. Աջակցում է Կոմիտեի կողմից իրականացվող ուսանողների արտադրական պրակտիկայի և ուսումնական դասընթացների կազմակերպմանը:

2.2.2. Իրականացնում է խորհրդատվության Կոմիտեի աշխատակիցների համար՝ գիտահետազոտական և մասնագիտական գործունեության իրականացման վերաբերյալ:

2.2.3. Օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցում է Կոմիտեին՝ համակարգը երիտասարդ մասնագետներով համալրելու գործընթացում:

2.3. Կողմերը՝

2.3.1. Կարող են իրականացնել սույն Հուշագրի նպատակներից բխող համապատասխան այլ միջոցառումներ՝ փոխադարձ համաձայնությամբ:

3. ՀՈՒՇԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1 Հուշագիրը չի հանդիսանում պայմանագիր և Կողմերի համար չի առաջացնում իրավական և ֆինանսական որևէ պարտավորություն:

3.2 Սույն Հուշագրին վերաբերող խնդրահարույց հարցերը Կողմերի միջև լուծվում են բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

4.ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն Հուշագրի դրույթների ցանկացած փոփոխություն կամ լրացում պետք է կատարվի կողմերի փոխադարձ՝ գրավոր համաձայնությամբ:

4.2 Յուրաքանչյուր փոփոխություն և լրացում հանդիսանում է Հուշագրի անբաժանելի մասը:

5.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

5.1 Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է հինգ տարի ժամկետով:

5.2 Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու բնօրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՄԻՏԵ	ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտե	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ
Հասցե՝ ք.Երևան Արշակունյաց 7	ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան ՈՒսանողական 3
Ղեկավար	Տնօրենի պաշտոնակատար՝
Ս. Թովմասյան	Ա.Մակարյան
ստորագրություն	ստորագրություն